ՀՀ Կենտրոնական բանկ նախագահի
Որոշում N 1/489**Ա**

07/10/2022

«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն 2022 թվականի սեպտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ ծավալով, 50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով և 20,000,000 (քսան միլիոն) ԵՎՐՈ ծավալով արժեկտրոնային, անվանական պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև՝ համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ծրագրային ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2022 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 42 արձանագրություն)՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. Գրանցել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված՝ 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ ծավալով, 50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով և 20,000,000 (քսան միլիոն) ԵՎՐՈ ծավալով արժեկտրոնային, անվանական պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ